1572-43

# ՔՐԻՍՏՈՆԷԱ ԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒ- ԹԻՒՆ

Ինչպէս կը հաւատայ և կը խոս տովանի ուղ Եկեղեցին Հայոց:

Այժմ առաջին անգամ շարադրեցա- նորահասակ մանկանց համար, որ հեշտ հասկընան :

՚ի Գրաբարտունէն Օրինակէն:

Հրամանաւ Տեառն և Տ̃ն Աբրահամու սրբզն և մեծազ գի Պատրիարգի տպագրեցաւ :

՚ի Տպարանի Յօհաննիսեան Պօղոսի:
՚ի Բէշիքթաշ խանն :
1814 ՚ի Կոստանդնուպօլիս :




Կամիս լինել դու քրիստոս նեոյ.
Զայս 'ի մէջն քաւ հաւատ քեոյ։

Հարց։ Դու ինչ ես։

Աստուծոյ շնորհօքն քրիստո-
նեայ եմ։

Ո՞րով եղէր ես քրիստոնեայ։

Ս͞բ աստուածային ծննդեանն, որ
մկրտեալ եմ՝ յանուն Հօր, եւ Որդ-
ւոյ, եւ Հոգւոյն Ս͞րբոյ։

Կատարեալ քրիստոնեայն ո՞վ է

Կատարեալ քրիստոնեայն այն է, որ
Ք͞սի հրամանը կըկատարէ, ու եկե-
ղեցւոյ պատուիրանքը կըպահէ։

Քրիստոնէին նշանը ինչ է։

Քրիստոնէին նշանը, մէկմը՝ երեսը
խաչակնքելն է. եւ մէկմըալ՝ իւր
ընկերը սիրելն է։

Ինչպէս պէտք է խաչակնքել։

Այսպէս ըսելով. յանուն Հօր՝ եւ
Որդւոյ՝ եւ Հոգւոյն Ս͞րբոյ։

Քա

Քանի՞ բան պէտք է գիտութենէն, որ փըր-կուիլի գտնուի՝ և արժանանայ երկնից։

Չորս բան. հաւատք, յոյս, սէր, և բարի գործ.

Քանի՞ հարկաւոր բան կայ գիտութենէն, որ անանց պէտք հաւատալ։

Երկու. մէկը՝ ս̅բ երրորդութեան խոր-հուրդը, թէ ա̅ծ մէկ է, և երեք անձն ունի. Հայր և Որդի և Ս̅բ Հոգի. Իսկ մէկալ՝ մարդեղութեան խորհուրդը՝ թէ Որդին ա̅ծ աշխարհք եկաւ, մար-մին առաւ, մեզ նման մարդ եղաւ. և իրեն չարչարանքովը և մահուամբը՝ մեզի սատանային ձեռքէն ազատեց։

Ո՞ր բանն պէտք յուսանք։

Այս երկու բանիս. մէկը՝ թէ քանի կենդանի եմք, ա̅ծ իւր շնորհքը մեզի կու տայ. և մէկալը՝ թէ երբ որ մե-ռանիմք, ա̅ծ իւր արքայութեան փառ-քը մեզի կու տայ։

Ո՞վ պէտք սիրենք։

Մէյմը ա̅ծ, և մէյմը մեր ընկերը։

Ինչ

Ինչ բարի գործուն պիտի գործենք։

Ա͞Ծ հրամանը կատարենք · որ եկե-
ղեցւոյ պատուիրանքը տեղը տանինք ·
աղօթք ընենք · պաք պահենք · և ողոր-
մութիւն տանք ։

Ա͞Ծ ինչ է ։

Աստուած ստեղծուածներուն ստեղ-
ծօղն է · ինքն հիչ մէկէմը ստեղծ-
ուած չէ · երեք անձն և մի բնութի-
ւն է · ամենաբարի է · ամենազօր է · ամե-
նատես է · ոչ սկիզբն ունի , և ոչ
վերջունի · յաւիտենական և անփո-
փոխելի է ։

Ա͞Ծ ուր է ։

Ա͞Ծ ամեն տեղ է ։

Հապա ինչու երկինքն է կըսեն ։

Երկինքը՛ ամենէն բարձր և պատ-
ուական տեղն է · հրեշտակները և
մեր հօգիքը հոն են · և արքայութիւնը
Ա͞Ծ այն տեղը սահմաներ է · անոր
համար Ա͞Ծ յերկինքն է կըսենք · զե-
րէ

Ուրէ Աստուած ամէն տեղ է.

Հայր Աստուա՞ծ է.

Այո՛ Աստուած է.

Որդին Աստուա՞ծ է.

Այո՛ Աստուած է.

Հոգին սուրբ Աստուա՞ծ է.

Այո՛ Աստուած է.

Ասանկ է նէ, երեք Աստուած կը լինին.

Չէն ըլլար երեք Աստուած, այլ մի Աստուած է. զէրէ երեք անձինքն մէկ ըզ մէկէ բաժանված չեն. այլ մէկ բնութիւն, և մէկ աստուածութիւն ունին.

Ասոնց մէկ օրինակ մը տուր ինձ, որ խելքս հասնի.

Քեզի օրինակ ըլլայ արևն. ահա նախ ինքն արեգակն. երկրորդ՝ լոյսն. երրորդ՝ տաքութիւն. որ այս երեքս մի են. զէրէ բաժանեալ չեն.

Նաև, ակնին ջուրն. անկէն վազած գետին ջուրն, և աւազանի մէջ լըցուած ջուրն. ուրիշ ուրիշ են, սակայն մէկ ըզ մէկէ բաժանված չեն. երեքն մէկ ջուր են.

Կրնա՞ս ուրիշ պարզ օրինակ մը եւս պատմել ինծի, որ աղէկ մը տեղեկանամ։

Ահա տամ քեզ՝ մէկ հեշտ հասկընալու, եւ յայտնի օրինակ մի։

Նայէ այս դիրը (ա), որ երեք ծիւղ կամ սիւն ունի. ամէն մէկ սիւն կատարեալ այբ է. մէկ ըզ մէկէ աւելի եւ պակաս զօրութիւն չունին. եւ երեք սիւներն մէկ տեղ գոլով՝ մէկ այբ կըլլան, եւ ոչ երեք այբ։

Այսպէս Հայր ած, Որդին ած, Հոգին սբ ած, երեք անձինք են, այլ երեք ած չեն, մէկ ած է. մէկ զօրութիւն եւ արարչութիւն ունին։

Ինչո՞ւ կը խաչակնքեմք ըզ մեզ։

Մէյմը այս է, թէ որովհետեւ սբ խաչն՝ քրի նշանն է. քրի նշանը մեր վերայ ունենալով՝ յայտնի կը ընեմք թէ քրիստոնեայ եմք՝ եւ քրի ծառայ. եւ մէկալը՝ որ խաչակնքած ժամանակնիս՝ սբ երրորդութե անունը կը յիշեմք. եւ ասով սբ երրորդութե հաւատալնիս, եւ երկրպագութին ընելնիս կիմացընենք։

## Դաս. Բ.

Հաւատոյ հանգանակը գիտես ։

Այո՛ գիտեմ. Հաւատամք ՚ի մի Աստուած՝ ՚ի Հայրն ամենակալ. և այլն ։

Այս հանգանակը քանի՞ մասունք կամ աստիճան ունի, և ո՞վ ըրաւ ։

Տասն երկու աստիճան ունի, և մեր առաքեալները՝ Երուսաղէմ քաղաքը՝ որ Սիոն վերնատունը սահմանեցին ։

Ո՞րն է առաջին աստիճանն, և այն ո՞ր առաքեալ ըրաւ ։

Առաջին աստիճանն է այս. Հաւատամք ՚ի մի Աստուած՝ ՚ի Հայրն ամենակալ՝ Արարիչն երկնի և երկրի ։ Եւ զայս՝ Պետրոս առաքեալը ըրաւ ։

Մեկնէ որ իմանամ ։

Ես կը հաւատամ՝ թէ մէկ է Աստուած. և այս մէկ Աստուածութեան առաջին անձն Հայր ամենակալողն է, որ երկինքը և երկիրս, և զամենայն ինչ որ կայ նէ, իւր ամենակալողութեամբ յոչնչէ ստեղծեց ։

Ո՞րն է երկրորդ աստիճանն, և ո՞ր առաքեալ ըրաւ ։

Երկրորդ աստիճանն է այս ։ Եւ ՚ի մ

տր յսի քսի՝ որդւոյն այ. Նաև այս ըսաւ յով-
հաննէս աւետարանիչքն։

Մ՛եկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ՝ թէ յս քս հօր
այ որդին է. և ինչպէս՝ հայր ած ամե-
նակալ է, երկնի և երկրի ստեղծօղ
է. յս քս ալ՝ հօր այ պէս ամենակալ
է, երկնի և երկրի արարիչ է։

Ո՞րն է երրորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Երրորդ աստիճանն է այս։ Մարմնա-
ցաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի մա-
քրուհւոյ սբոյ կուսէն հոգւովն սբով։ Նաև այս
ըսաւ յովհաննէսի աւետարանչին եղ-
բայրն՝ յակոբոս առաքեալն։

Մ՛եկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ՝ թէ յս քս ճշմա-
րիտ ածը՝ մեղքի փրկելու համար աշ-
խարք եկաւ. հոգւոյն սբյ զօրութե՛
մբ կոյս մարիամ ածածինէն ծնաւ.
մեղքէն ՚ի զատ մարդկային բոլոր բը-
նութիւն առաւ. հոգւով՝ մտօք՝ մարմ-
նով՝ ճշմարիտ և կատարեալ մարդ-
եղաւ.

եղաւ․ ոչ ա՟ծուածը 'ի մարմին փոխուե-ցաւ, և ոչ մարմինը յա՟ծուածի փոխուե-ցաւ։

Ո՞րն է չորրորդ աստիճանն, և ինչ ըսել։

Չորրորդ աստիճանն է այս։ Չարչա-րելով, խաչելով, Թաղելով։ Նաև այս ըսաւ անդրէաս առաքելոյն։

Մ՞եկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ՝ Թէ յ՟ս ք՟ս մեզի այնքան սիրեց, որ դժոխքին տանջան-քէն՝ և սատանի ձեռքէն մեզի ազատե-լու համար, հրեից ազգէն չարչարվե-ցաւ՝ պոնտացի պիղատոս դատաւորին իշխանութ՟ե ժամանակը․ և մ՟է խա-չափայտին վերայ մեռաւ։ Նոյն ժա-մանակը ք՟ի հոգին ու մարմինը մեկ ըզ մեկէ բաժանվեցան․ լաքին ք՟սի ա՟ծուածը ոչ հոգիէն բաժանվեցաւ, և ոչ մարմինէն։

Օրինակ մի տուր որ խելքս հասնի։

Քեզ օրինակ ըլլայ աղեղը․ այսինքն՝ օխէն էայը․ Թէ ասոր Թելին մէջ տե-ղէն կտրես, այն Թելն՝ մեկ ըզ մեկէ

կը

կը բաժնըվի · լաքին աղեգը երկու-
կտոր թելէն ալ չի բաժանվիր: Ո՛ւհոմ
թելը կը նշանակէ քի՛ մարմինը և հո-
գին, որ մահուան ժամանակը բաժան-
վեցան · աղեգը կը նշանակէ քի՛ ած̄-
ութի̄ը, որ ոչ հոգիէն բաժնըվե-
ցաւ, և ոչ մարմինէն:

Ո՞րն է հինկերորդ աստիճանն, և ի՞նչ բան:

Հինկերորդ աստիճանն է այս · Էջ
՚ի դժոխս: Եւ այս բան թովմաս ա-
ռաքեալն:

Մեկնէ որ իմանամ:

Ես կը հաւատամ, թէ յս̄ քս̄ երբ որ
խաչին վերայ մեռաւ, մարմնովը նո-
րափոր գերեզմանի մէջ թաղվեցաւ,
և հոգւովը դժոխքը իջաւ · դժոխքը
քակեց · և այն զընտանին մէջը եղե-
ո̄ք նահապետներուն, և մարգարէ-
ներուն, և արդարներուն հոգիքը
ազատեց: Ուստի անոնք որ ադամայ
սկզբնական մեղացը համար այն բան-
տին մէջը արգելված էին՝ քս̄ի չարչա-
րանքովը և մահուամբը փրկեցան,
և երկինքը ելան:

Ո՞րն է վեցերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ:
Վեցերորդ աստիճանն է այս. Յեր-
րորդ աւուր յարուցեալ ՚ի մեռելոց: Նու-
այս ըսաւ բարդուղիմէոս առաքեալն:

Մեկնէ որ իմանամ:

Ես կը հաւատամ, թէ յս քս երեք օրէն յետոյ՝ շաբաթ գիշերը որ կիրա-
կի կը լուսանայ՝ իւր ամենայն զօ-
րութեան յարութիւն առաւ անապականելի
մարմնով:

Ո՞րն է եօթներորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ:
Եօթներորդ աստիճանն է այս. Համ-
բարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ հօր:
Նու այս ըսաւ փիլիպպոս առաքեալն:

Մեկնէ որ իմանամ:

Ես կը հաւատամ, թէ յս քս յետ
քառասուն աւուր յարութենէն՝ իւր
ամենայն կարողութեամբ երկինքը համ-
բարձաւ. և հօր այն աջ կողմը նստաւ,
որոյ հետն հաւասար է փառօք և իշ-
խանութեամբ. և իւր հաւատացելոցը
միշտ օգնութիւն կընէ:

Ո՞րն է ութերորդ աստիճանին , և ո՞վ բառ ։

Ութերորդ աստիճանն է այս . Գալոց է դատել կենդանիս և մեռեալս ։ Սա այս բառ Մատթէոս աւետարանիչն ։

Մեկնէ որ իմանամ ։

Սա կը հաւատամ, թէ յս՜ քս՜ աշխարհքիս վերջը դատաստան պիտի գայ անթիւ հրեշտակներով ․ արդարները յաջ կողմը պիտի կանգնեցընէ , և մեղաւորները ձախ կողմը ։ Արդարները արքայութի կը տանի, որ յաւիտենական փառք ու պատիւը հոգւով մարմնով վայելեն , և մեղաւորները և անհաւատները դժոխքը կը ղարկէ , որ յաւիտենական պատիժ և տանջանք կրեն ։

Ո՞րն է իններորդ աստիճանին , և ո՞վ բառ ,

Իններորդ աստիճանն է այս ․ Հաւատամ ’ի հոգին սբ ։ Սա այս բառ Յակոբոս Ալփեան ։

Մեկնէ որ իմանամ ։

Սա կը հաւատամ ’ի հոգին սբ ․ որ հօր և որդւոյ էակից և համագոյ է ։

Սա

Նաւ ինչպէս հայր և որդի անեղ և կատարեալ են, նոյնպէս և հոգին սբ-ամ անեղ և կատարեալ է. և մեք քանի որ յայս աշխարհս եմք, իւր շնորքը մեզի կու տայ, որ փրկութեն հասնիմք ։

Ո՞րն է տասներորդ աստիճանն, և ո՞վ ըրաւ։

Տասներորդ աստիճանն է այս. Ի մէ կաթողիկէ եկեղեցի։ Նաւ այս ըրաւ օրինին կանոնացին ։

Մեկնէ որ էմնաց ։

Նաս կը հաւատամ ՚ի սբ. կաթողիկէ եկեղեցին։ Նաքին իմացիր, որ կաթողիկէ եկեղեցին՝ չէ այս քարաշէն և փայտաշէն եկեղեցին, որ կըսվի նիւթական եկեղեցի. այլ ամ քրիստոնէից ժողովն է, որ կըսվի աննիւթական եկեղեցի։ Որ ամէնքն ՚ի միասին մեկ մարմին են միոյ գլխոյ. և այն գլուխն է տէրն մեր յս քս. և մեկ հաւատք, մեկ մկրտութի, և մեկ սրբարար շնորք ունին ամէնքն. և միմեանց հետ հաղորդութի կընեն աղօթքով և բարի

գոր

գործով։ Ուստի կաղօթեմք յարևա-
գալի ժամուն՝ ասելով. ցարևելից մինչև
ցարևմուտս ընդ ամ տեղիս տէրութեանն իւրէ,
ուր և հարցանն զանուն տն աւրհնուէ. տր ամե-
նէաք նոյ և բարեխօսութն մեզ ողորմեսցի։
Նաև այս ուղղափառ եկեղեցին ունի
այս չորս արտաքին նշանս, այ, մի՝ սբ՝
կաթուղիկէ և առաքելական։ Ինչ
պէս կը քարոզէ եկեղեցին. Հաւատաս-
ցուք զամենակալն ած. ի մի միայնոյ՝ սբ՝
կաթողիկէ՝ և առաքելական եկեղեց
ւոյ։

Ո՞րն է տասն և մէկ երրորդ աստիճանն, և ո՞վ
ըսաւ։

Տասն և մէկ երրորդ աստիճանն է այս.
՚ի թողուէ մեղաց։ և այս ըսաւ Թադէոս
առաքեալն։

Մեկնէ որ խօսեամ։

Ես կը հաւատամ՝ թէ այս սբ եկե-
ղեցւոյ մէջ՝ մեղաց թողուի կըլլայ.
զերէ ով որ իւր մեղքը զղջայ, խոս-
տովանի, և ապաշխարէ, և քնի սբ
մարմնոյ և արեանն հաղորդի, հար-
կա

կաւ լծողութիւն կը գտնուի։ Նաև այս իշխանութիւնը ած տուեալ քահանայից, որ զջնջոց մեղաւորին արձակումն և թողութիւն տան։

Ո՞րն է տասն երկու երրորդ առաքելոցն, և ո՞վ ըսաւ։

Տասն երկու երրորդ առաքելոցնն է այս. ՚ի յարութիւն մարմնոյ, ՚ի դատաստանին յաւիտենից։ Նաև այս ըսաւ մատթէոս առաքեալն։

Ո՞րնէ որ իմանամ։

Նաս կը հաւատամ, թէ դատաստանին օրն մեռեալներն իւրեանց մարմնովը յարութիւն կառնեն. բարի քրիստոնեայները յարքայութին կերթան, և անհաւատները և չար քրիստոնեայները դժոխքը։

## Գլ. Գ.

Ո՞վ ստեղծ զքեզ, և ո՞ր ինչ պատճառաւ։

Նա ստեղծ զիս. որ քանի կենդանի եմ, այ ծառայութին ընեմ, այ պաշտօն մատուցանեմ. և երբ որ մեռանիմ, արքայութեան փառացը հասնիմ։

Ինչո՞վ կըլլայ Ա͞յ ծառայութի͞ն ընելը։

Այս երկու բանովս կըլլայ. միայն՝ որ Ա͞յ վախը և երկիւղը սրտերնուս մէջը միշտ կունենանք։ և մէկալ՝ Ա͞յ պատուէրանքը սիրով և զգուշու͞է կը պահենք։

Ինչո՞վ կըլլայ Ա͞յ թշնամութի͞ն ընելը։

Այս երեք բանովս կըլլայ. նախ՝ ներքին մտօք և հոգւով Ա͞յ մեծութենը կը հաւատամք։ Երկրորդ՝ արտաքին կերպով՝ ահի͞ւ և դողու͞է Ա͞յ ծունր կը դնենք, երկրպագութի͞ն կընենք։ Երրորդ՝ ս͞բ պատարագ կը տեսնանք, Ա͞յ աղօթք և աղաչանք կը մատուցանենք։

Աղօթքն ինչ է։

Աղօթքն է, որ միտքըդ առ Ա͞ծ կը վերցունես, քեզի բրած բարերարութե͞ն համար շնորհակալ կըլլաս, և արժանաւոր բան մը կը խնդրես. Նաև այս երկու կերպ է. մէկն միայն սրտին և մտօք, և կրկին ձայնաւորական աղօթք։ Նաև մէկը՝ բերանով և ձայ-

Ի  նիւ

Տէրն , և կըսէ յաջողակ աղօթք ։

Ինչո՞ւ համար աղօթքներս երբեմն ընդունելի չեն ըլլար ։

Երեք պատճառ ունի ․ մէկն այն է , որ հաստատուն հաւատով և յուսով չենք խնդրեր , այլ երկմտութեամբ և թերահաւատութեամբ , որ՝ Հնազանդել ։ Երկրորդ՝ անպէտ և անարժան բան կը խնդրեմք ․ ինչպէս՝ գեղեցիկ տուն ․ չափէն աւելի ստակ և ապրանք , և այլն ։ Ուստի կըսէ յակոբոս առաքեալն ․ Խնդրէք՝ և ոչ առնուք , վասն զի չարաչար խնդրէք ։ Երրորդ՝ մեր խստասրտութեան համարէ ․ զէրէ մենք երբ որ անգութ և քարասիրտ կըլլանք , մեզի աղաչողին ձայնին չենք լսեր , Աստուած մեր ձայնը ինչպէս պիտի լսէ ։ Ուստի եթէ մենք անյիշաչար ըլլանք , մեր ընկերին յանցանքը ներենք , Աստուած ալ մեր յանցանքը կը ներէ ։ այս է որ կըսենք տէրունական աղօթքին մէջը ․ Թող մեզ զպարտիս մեր , որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։

Ըստ

Ահաւ տէրունական աղօթքն , որ ըսէ .

Հայր մեր որ յերկինս, ս̃բ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութ̃ի քո . եղիցին կամք քո որ̃պ յերկինս և յերկրի . զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր . և թո՛ղ մեզ զպարտիս մեր՝ որ̃պ և մեք թողումք մերոց պարտապանաց . և մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութ̃ի . այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ . զի քո է արքայութ̃ի և զօրութ̃ի , և փառք յաւի-տեանս . ամէն :

Ինչո՞ւ տէրունական աղօթք կըսուի :

Զերէ ք̃ս տ̃րը սորվեցուց մեզի այս աղօթքը . և ամէն աղօթքներէն աւելի մեծ և զօրաւոր է . անոր համար ամէն քրիստոնէի պէտք է բերան գիտնալ և ըսել . և իւր զաւակցը սորվեցընել :

Պաքն ի՞նչ է :

Պաքն է , որ մարդ իւր անձը կը նեզէ , և զինքը կարգիլէ՝ փափուկ , պարարտ , և գիրցընող կերակուրներէն , այն օրերը՝ որ ս̃բ եկեղեցին սահմաներ է .

Ի՞նչեր ուրիշ պահք կա՞յ մի։

Բայց կայ ուրիշ հարկաւոր պահք մի, որ կըսուի ներքին պահք. և այս է, որ մարդըս կը պահէ իւր սիրտը և միտքը չար մտածմունքներէն. բերանը՝ հայհոյութենէ և սուտ խօսելէն. աչքը՝ գէշ նայելէն. ականջը՝ ստաստպել խօսք և բամբասանաց լսելէն. ձեռքը՝ չար գործելէն։

Ողորմութիւն ի՞նչ է։

Ողորմութիւնը այն է. որ կարօտեալ և խեղճերի մարդոյ օգնութիւն կընեմք, և ներողութիւն կաղաչեմք։

Ողորմութիւնը քանի՞ ցեղ է։

Երկու ցեղ. մէկը մարմնաւոր, և մէկը հոգևոր։

Որո՞նք են մարմնաւոր ողորմութիւնք։

Բայս եօթն են. կերակրել զքաղցեալս. արբուցանել զծարաւեալս. զգեցուցանել զմերկս. ժողովել զօտարս և զպանդխտեալս. ի տես գնալ հիւանդաց. երթալ մխիթարել զբանտաւորս

տարգեալս․ Թաղել զանտէր մեռեալս։

Որո՞նք են հոգևոր ողորմութիւնք։

Նոյն եօթն են․ բարի խորհուրդ-տալ երկմիտ մարդուն․ խրատել և սորվեցընել տգէտը․ յանդիմանել և չխօսել մեղքէն ետ չի դարձողը․ ցա-ւակից ըլլալ և մխիթարել տրտումը․ ներել ընկերին յանցանքը և սուըր․ համբերել նեղութեան, և զժգոհանք չընել․ աղօթք ընել հաւասար կեն-դանեաց և մեռելոց համար։

Դաս․ Ը։

Այ̃ օրէնքին համ պատուիրանները քանի՛ է։

Նոյն պատուիրանքը տասն է․ և մով-սէս մարգարէին ձեռօքը տուաւ Ած̃-Սինա լեռը, երկու քարեղէն տախ-տակի վրայ գրած։

Ո՞րն է առաջին պատուիրանքը, և անկէց ինչ պէտք սորվինք։

Առաջինն է այս․ Ես եմ Տր̃ Ած̃ քո․ Մի եղիցին քեզ Ած̃ք բաց ինէն։ Եւ այս հը-րամանս մեզ կը պատուիրէ, միմիայն

երկ

երկինք և երկիր՝ և ամենեղելոց արա-
րիչ ածը հաւատալ, և ուրիշը չի
պաշտել։

Ո՞րն է երկրորդ պատուէրը, և անկէց ետ ինչ
պէտք սորվինք։

Երկրորդն այս է․ Մի՛ արասցես քեզ
կուռս ընդ ամ նմանութե․ մի՛ երկիրպագանի-
ցես նոցա․ և մի՛ պաշտեսցես զնոսա։ Եւ այս
հրամանս կը պատուիրէ, ոսկիէ, ար-
ծաթէ, քարէ փայտէ, և կամ այլ
ինչ նիւթէ կուռք չի շինել, և անոր
երկրպագութիւն չընել։ Ուստի ագահ
մարդը, որ ոսկին ու արծաթը չա-
փէն աւելի կը սիրէ ու պատուէ,
կռապաշտ կը սեպվի․ անոր համար
պօղոս առաքեալը կը գրէ․ ՚ի բաց ըն-
կեցէք զագահութիւն, որ է կռապաշտութիւն։

Մէկ անհաւատը թէ որ հարցընէ, հապա
ինչու պատկերը կը շինէք, և անոր երկրպա-
գութիւն կընէք։

Անոր ըսէ թէ, մենք պատկերքը ած
է չենք ըսեր․ քաւ լիցի․ այլ պատ-
կերքը տեսնալով, անոր տէրը միտք
կը

կը բերենք։ Եթէ Սրբոց պատկերք է, խոնարհութիւն և պատիւ կընեմք. և այն Սուրբը մեզի բարեխօս կը բռնեմք։ Իսկ եթէ տէրունական և Աստուծոյին պատկեր է, ծնրադրութիւն և երկրպագութիւն կընեմք. և այս մեր ըրած խոնարհութիւնը և երկրպագութիւնը՝ պատկերքին տէրոջը կը վերաբերի. անոր համար ձեռագործ պաշտօղ չենք, այլ ճշմարիտ Աստուածապաշտենք։

Ո՞րն է երրորդ պատուէրը, և ինչպէս ենք պէտք սորվինք։

Երրորդ պատուիրանն է. Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո 'ի վերայ սնոտեաց։ Իսկ այս հրամանս մեզ կը պատուիրէ, որ Աստուծոյ երկրպագելի անուանը՝ դատարկ տեղն չի յիշենք. կամ սուտ բանի համար վկայ չի բերենք։ Օ եթէ ունայն և ոչինչ խօսքի համար՝ Աստուծոյ անուանը յիշելը՝ սուտ երդում ընել է։ Նաև, այն քրիստոնեայն որ անուանով միայն քրիստոնեայ է, և

մկըը

մկրտութեան շնորհը, և քրիստոնէի
գործք չունի, ոչ անունը՝ ի վերայ նորա
տեղաց առնող է։

Ո՞րն է չորրորդ պատուէրը, և ինչե՞ս է
պէտք սորվինք։

Չորրորդն է. Յիշեսջիր զօր շաբաթուց
սրբել զնա։ Եւ այս պատուէրը մեզի
կը սորվեցընէ, վեց օր մարմնաւոր
գործ՚ ընել, և մէկ օր հանգչիլ, և
ոչ փառաւորութեան և աղօթից և
հոգևոր գործոյ պարապիլ։

Այն շաբաթ օրը պատուիրեց հանգչելու, ին-
չու որ առաքեալները կիրակի օրը հաստատեցին։

Պատճառն այս է. զերբ Քրիստոս Տէրն մեր
կիրակի օրը յարութիւն առաւ, և մեզի
անդյին ծառայութենէն ազատեց. և ՚ի
պատիւ Քրիստոսի յարութեանը սահմանեցին
ու առաքեալները՝ կիրակի օրը ծա-
ռայական գործքէ ազատ կենալ։

Ո՞րն է հինգերորդ պատուէրը, և ինչե՞ս է
պէտք սորվինք։

Հինգերորդն է. Պատուեա՛ զհայր քո և
զմայր քո. զի քեզ բարի լինիցի. և երկայնա-
կեաց

հետոյ շինեցիս ՚ի վերայ երկրին բարութեան ։

Եւ այս պատուէրս մեզի կը սորվեցընէ, թէ ծնողաց պատուէ խոնարհութ̄ եւ պատկառանքով . անոնց հարկաւոր պէտքը քո կարողութեդ̄ չափ հոգայ, եւ մի՛ տրտմեցըներ . որ Ած̄ քեզի բարի ընէ, եւ շատ ապրիս ։

Այս պատուիրանէն ալ ի՞նչ կիմացուի ։

Հայր ըսելով՝ կիմացվի ամ̄ երախտաւորք եւ բարութի̄ ընողները . ինչպէս՝ թագաւորը, իշխանը, վարդապետը, վարժապետը . եւ անոնք ամ̄՝ որ հօր պէս գութ եւ խնամք ունին մեր վրայ, եւ մեր աղեկութե̄ը պատճառ կըլլան ։

Որն է վեցերորդ պատուէրը, եւ անկէց ի՞նչ պէտք սորվինք ։

Վեցերորդն է . մի՛ սպաններ ։ Եւ այս հրամանս կարգիլէ՝ առանց իրաւանց մարդ սպաննելը . ինչպէս՝ որ դատաւոր չէ, իշխանութի̄ չունի, եւ մարդ կըսպաննէ . եւ կամ թէ իշխանութի̄ ունի, եւ դատապարտ անմեղն կըսպաննէ ։

Եւ չինէքի մարդասպանութենէն շատ

անդամ յառաջ կուգայ բարկութենէն. անոր համար Ք͞ս Տ͞րն մեր հրամայեց, Թէ մի՛ բարկանայք. և ըսաւ՝ Թէ ա͞մ որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի գեհենոյն:

Քանի՞ կերպ է ծուլութիւնն:

Երկու կերպ է. մեկը մարմնաւորն է, որ մարդոյ մարմինը և հոգին մեկըզ մեկէ կը բաժանէ. և մեկալը հոգևոր է, որ իւր հաւատակից եղբայրը և ընկերը կատէ. անոր համար կըսէ յովհաննէս աւետարանիչը. Թէ որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է:

Որն է եօթներորդ պատուէրը, և անկէց ինչ պէտք սորվինք:

Եօթներորդն է. Մի՛ շնար: Այս հրամանս մեզի կարգիլէ ամեն չար գործքէ. որով կը խրատիմք, պարկեշտ և ս͞բ պահել մեր հոգին և մարմինն:

Որն է ութերորդ պատուէրը, և անկէց ինչ պէտք սորվինք:

Ութերորդն է. Մի՛ գողանար: Այս հրամանս մեզի կարգիլէ այն ամեն

բա

բանէն որ օտարի է՝ չը գողանալ, և չը յափշտակել. ոչ ծածուկ, և ոչ յայտնի։

Ուրիշ ինչերով գողութիւն ալ կ՚ըլլայ մը։

Նաւ գողութիւն կը սեպվի. բանվորին վարձքը օրէ օր ձգել. կամ էժէլ պակաս չափ գործ ածել. կամ լաւը ցը ցընել, և գէշը տալ։ Նաւ գիտցիր, որ այլ մեղքերը ապաշխարանքով կը ջնջվին, այլ գողութին ՚ի տէրն պէտք դառնայ։

Ո՞րն է իններորդ պատուիրը, և ասիկայ ինչ պէտք սորվեցնէ։

Իններորդն է. Մի՛ սուտ վկայեր ընկերիդ դէմ։ Նաւ այս հրամանս մեզի կարգիլէ այն ամէն բանէն, որուն աղէկ տեղեակ չենք, վկայութիւն չի տանք։

Ուրիշ ինչերով սուտ վկայութիւն ալ կ՚ըլլայ մը։

Նա՛յո՝ սուտ վկայ են բանբասողները՝ որ ընկերին բարի անունը կապականեն։ Սուտ վկայ են բանսարկութիւնողները, որ տարաձայնութիւն և կռիւ կը ձգեն՝ տան և ընտանեաց մէջ, բա-

րե

ընկալի մեզ, ընկերի մեզ, և այլն.
Սուտ վկայ է մարդ, ահաձայն, այսինքն, դրացւոյն իւրոյն. որ անգէ չըլլալու համար, սուտ խօսքերով՝ այն այդպէս է կըսէ։ Դաւիթ մարգարէն զայսպիսի մարդն կանիծէ ասելով. ԱԾ ցրոհեայէ զականքն խարդախաւորաց։ Աւասի ամէն սուտ խօսողները՝ որդի սատանին կը կոչէ Տէրն մեր, զերծ կըսէ. որ սուտ խօսի, ի յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր նր սուտերուն. և կը պատուիրէ, ինչ եղիցի բան ձեր, այոն՝ այո. և ոչն՝ ոչ։

Որն է տասներորդ պատուիրանը, և անկէց ինչ բանէ արգելու։

Տասներորդն է. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, և մի՛ ագարակի նր. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, և մի՛ ծառայից նր. և մի՛ ամենինչ ընկերի քո իցէ։ Սա այս հրամանաւ կարգելէ ԱԾ մեր սրտէն ամէն կերպ չար ցանկութիւն. և բաւական պիտոյ համարինք այն, որ ինչ ԱԾ մեզի տուեր է, թէ սակաւ, և թէ այլ ինչ ըստացուածք։ Ո՛վ չրէ ցանկութիւնը

մեղք կը ծնանի . և մեղքը՝ մահ և դատապարտութիւն կըբերէ։ Նոյն որով հետև սրտին գութը՝ մարդոյս աչքն է . պէ՛տք է որ աչքերնիս զգուշութ-պահպանեմք . որ ցանկութիւնը գողի նման սրտերնիս չի մտնայ , և մեր հոգին չըսպաննէ։

Ո՞րն է ամէն պատուիրանաց չափաւորումը։

Ամէն օրինաց և պատուիրանաց կատարումը սէրն է . ինչպէս պօղոս առաքեալը կըգրէ , եթէ լրումն օրինաց սէր է , 'ի սուրբ սրտէ , և 'ի մտաց բարեաց , և յանկեղծաւոր հաւատոյ։

Նախանձը ի՞նչ պէտք սեպենք։

Նախ և առաջ պարտաւոր եմք զնծ̄ ճանչել . որ մեղքի ստեղծեր է , և կը խնամէ։ Նա հայր Ած̄ զորդին միածին աշխարհք խրկեց մեզի փրկելու համար։ Որդին միածին եկաւ , մարմին առաւ , մեզի փրկեց։ Հոգին սբ̄ իւր շնորքը մեզ կուտայ , որ ճշմարտութիւնը ճանաչեմք , և բարին կամենամք։

Նաև

Երկրորդ՝ ո՞վ պէտք սիրել։

Երկրորդ՝ մեր անձը պէտք սիրեմք. մեղքէն հեռու պահեմք. բարի գործեմք. որ Աստուծոյն ողորմութեանը և արքայութեանը հասնիմք։

Երրորդ՝ ո՞վ պէտք սիրել։

Երրորդ՝ մեր ընկերը պէտք սիրեմք՝ մեր անձին նման. զերէ մէկ Աստուծէ ծնել եղբայր եմք. մէկ հաւատք, մէկ մկրտութիւն ունիմք. և մէկ արքայութիւն պէտք երթամք։ Սուրբ առաքեալը կըսէ թէ, ո՛վ որ իւր եղբայրը կատէ, մարդասպան է։

Գլ. Ե։

Մի՞ եկեղեցւոյ խորհուրդը ինչ է։

Եկեղեցւոյ խորհուրդը՝ այն անտեսանելի շնորհացը արտաքին և զգալի նշան մի է, որ անով Աստուծոյն շնորքը մեզի կը տրվի։

Քանի՞ է։

Եօթն է, այսինքն՝ մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն, ապաշխարութիւն, վերջին օծում, կարգ, պսակ։

### Մկրտութիւն ինչ է

Մկրտութիւն՝ վերստին և հոգևոր ծնունդ մի է. որ սբ աւազանին մէջը մեր մարմինը կը լուացվի ջրով՝ յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սբյ. և մեր հոգին կը մաքրի ադամայ սկզբնական մեղքէն։

### Դրոշմն ինչ է։

Դրոշմն է օծումն սրբալոյս մեռոնին, որ օծեալ և կնքեալ կըլլայ մկրտեալն. և այս անջնջելի նշանովը քսի զօրապետին յատուկ զինուոր կը լինի։

Քանի՞ տեղ օծում կըլլայ դրոշմէն ժամային։

Ինը տեղ, այսինքն, ճակատը, աչքը, ականջը, հոտոտելիքը, բերանը, ափը, սիրտը, քամակը, ոտքը։

Այս օծումը չաս կնիքը՝ ինչ շնորհ ունին։

Ճակատին կնիքը՝ համարձակութիւն կուտայ քսի սբ հաւատքը աներկիւղ դաւանելու։ Աչքին կնիքը՝ հոգւոյ աչքը կը լուսաւորէ, որ միշտ արթուն և պատրաստ մնայ։ Ականջաց կնիքը,

կնիքը՝ հոգւոյ ականջը կը բանայ, որ Աստուծոյն պատուիրանքը լսէ։ Հոտոտելեաց կնիքը՝ յաւիտենական կենաց անմահական հոտովը, հոգին կըզմայլեցընէ։ Բերանին կնիքը՝ պահպան կըլլայ բերնին, որ չար չը խօսի։ Ձեռին կնիքը՝ զօրութի և յաջ կուտայ ձեռքին, որ բարի գործէ։ Սրտին կնիքը՝ հոգին կը սրբէ, կը նորոգէ, և կը հաստատէ, որ միշտ բարի խորհի։ Թամակին կնիքը՝ վահան ոյժինքն խաչխան կըլլայ կըռնակը, որ սատանայյին նետը չը խոցէ։ Ոտից կնիքը՝ ոտքերը կուղղէ, որ արքայութե ճանապարհը երթայ։ Եւ այս կնիքներըս մէյմեկ ահաւոր զէն կըլլան մկրտեալ տղային, որ անոնցմով կը պատերազմի սատանայի և մարմնոյ և աշխարհին դէմ, և կը յաղթէ. և Քն թագաւորէն անթառամ պսակ կառնու։

Հաղորդութին ինչէ։

Հաղորդութին՝ Քրի Տր մարմնոյ և

արեան խորհուրդն է, որ արտաքին տեսութ. հաց և գինի կերևնայ, այլ իսկապէս Քն է. և մեք անոր ճաշակմամբը՝ կեանք և կենդանութի կըրտանամք: Նաև, Քնի սէրը մտքերնիս կը բերեմք և կը յիշեմք, թէ մեզի այնքան սիրեց, մինչև որ իւր մարմինը և արիւնը մեզի հոգևոր կերակուր և ըմպելի տուաւ. որով մեր հոգին կենդանի կըլլայ:

Նաև կը հաւատամ, թէ սրբագործեալ նշխարքն իսկապէս Քն է. միայն զայս կուզեմ ըսել, երբ որ քահանայն մէկ նշխարքը մաս մաս կը բաժանէ, ինչպէս ամբողջ կը մնայ մէկ Քն այն բաժանեալ մասանց մէջը. ասոր կը խընդրեմ ինչ մէկ օրինակ մը տալ որ իմանաս:

Քեզի օրինակ ահա արեգակը, որ մէկ հատ է աշխարքիս մէջ, և մէկ կերևնայ ամբողջ հայելիին մէջը. և եթէ կտոր կտոր ընես այն հայելին, մի և նոյն արեգակն է, որ կերևնայ ամէն մէկ կտոր հայելիին մէջը, և իւր ամ-

բողջութիւնը չի կորսնցներ. այսպէս մէկ Քս է ամբողջ նշխարքին մէջ, և բեկեալ մասանց մէջ.

Ապաշխարութիւն ինչ է.

Ապաշխարութիւն է, իւր գործեալ մեղքը լալ, և կամաւոր պատիժ կրել.

Քանի՞ բան պէտք է ապաշխարութեան.

Չորս բան. առաջինն է՝ զղջումն գործեալ մեղքերին. Երկրորդն է՝ առաջադրութիւն կրկին անգամ չի գործելոյ. Երրորդն է՝ ճշմարիտ խոստովանութիւն առաջի քահանային. Չորրորդն է՝ կատարեալ վճարումն դրած ապաշխարանքին. Եւ այս մէկ խորհուրդը՝ քահանային արձակում տալովը կը ջնջէ բոլոր ներգործական մեղքերը, եթէ մահացու, և եթէ ներելի.

Վերջին օծումն ինչ է.

Վերջին օծումն՝ հոգւոյ և մարմնոյ առողջարար դեղ մի է, որ քահանայական աղօթքին զօրութեն ծանր հիւանդները կը բժշկէ, և անոնց ներելի մեղքը կը քաւէ.

Հայոց մէջ եկեղեցւոյն վերջին օծման խորհուրդը կը կատարուի՞։

Այո՛ ծանր հիւանդներուն վրայ քանի անգամ հարկաւորին՝ կը կատարէ. և այս մէջ խորհուրդն է՝ որ կըսուի Գիշերժամ, ուր քահանայքն կը կարդան սաղմոս, գիրք, բժշկութեան աւետարան. աղօթք. և յետոյ փարատեցն զցաւս հիւանդին։

Մե՛ր ըսէ՞ օրհնեալ իւղով հիւանդը օծել հարկաւոր է։

Իւղով օծելն՝ ազգային ծէս, և խորհրդական արարողութիւն մ'է, և հաւատոյ մաս չէ, անոր համար հարկաւոր չէ. վերջէ ասանկ ծիսական արարողութիւններ ամէն քրիստոնեայ ազգի մէջ՝ կըլլայ որ կը փոփոխուի, և կըլլայ որ կը խափանուի։ Իսկ բուն զօրութիւնը այս խորհրդոյս է քահանայական աղօթքը և ընթերցուածքը. և այն է հաւատոյ մասը և հարկաւորը, և այս ամենևին չի խափանուիր. ինչպէս կը գրէ մեծն Խոսրով ժամագրքէն

գրքի մեկնութեան մէջը, 281 երեսը։ Ուստի կըսէ յակոբոս առաքեալն, թէ աղօթքն հաւատովք փրկեսցէ զաշխատեալն։

Քահանայութեան կարգն ինչ է։

Քահանայութեան կարգը հոգևոր իշխանութիւն մի է, որ 'ի հոգւոյն սրբոյ կառնու ձեռնադրեալն. և իշխանութիւն կունենայ պատարագ մատուցանել, անդարձ մեղաւորը կապել, և զղջացող մեղաւորին արձակում և թողութիւն տալ։

Պսակն ինչ է։

Պսակն՝ եկեղեցւոյ սուրբ խորհուրդ մի է, որ այրը և կինը սուրբ սիրով և հաւատարմութեամբ կը կապակցէ միմեանց հետ. որ զաւակ ծնանին, և քսի եկեղեցին աճեցուցանեն։

Գլ. Զ։

Բարոյական առաքինութիւնք քանի՞ են։

Չորս են. յ՝ խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն, և բարեխառնութիւն։

Խոհեմութիւնն ինչ է։

Խոհեմութիւնն է, որ անով չարը՝ բարին

կը ճանաչեմք, և մէկ ըզ մէկէ. և ամ-
մէն ընելու բաներնիս՝ ըստ արժան-
ւոյն կը տնօրինենք։

## Արիութիւն ինչ է։

Արիութիւն է, որ անով ամմէն դժուա-
րութիւն, և աշխարքի փորձութեան համբե-
րութիւնը կը յաղթեմք՝ ոչ յաջողութեան
ժամանակը կը հպարտանամք, և ոչ
ձախորդութեան ժամանակը կը տրտմիմք։

## Արդարութիւն ինչ է։

Արդարութիւն է, որ անով ամմէն մար-
դու արժանի և վայելուչ եղածը կը
նեմք. թէ պատուել պէտք է՝ կը
պատուեմք, թէ վախնալ արժան է՝
կը վախնամք, թէ ողորմելու կարօտ
է՝ ողորմութիւն կուտամք։ Նա և այս ար-
դարութիւն է, որ մեզնէ մեծերին պատիւ
ընեմք. մեզ հաւասարերին հետ սիրով
կենցաղավարիմք. մեզնէ պզտիկին
խնամք և գթութիւն ընեմք։

## Բարեխառնութիւն ինչ է։

Բարեխառնութիւնը՝ ամմէն անկարգ-

ցան

ցանկութեան սանձ և խելարն է. որ ա-
նով չար ցանկութիւնը կը խափանի։

Այս ըսած առաքինութիւններդ ամենն աղէ՞կ և ամենն մարդոց հասարակ է. թէ քրիստոնէի յատուկ եղած առաքինութիւն ալ կա՞յ մի։

Այո՛ կայ, որ Քրիստոս մեր Տէրը ինքն ըսաւ, և մեզ սորվեցուց. և է այս չորսը. խոնարհութիւն, սէր, համբերութիւն, և ներողութիւն։

## Գլ. Ա.

Քանի՞ առաքինութիւն կայ, որ անոնք գործելով երանութեան արժանի կըլլայ մարդս այս աշխարհիս մէջ, և վերջապէս երանութեան կը գըտնայ արքայութեան մէջ։

Ութը կերպ առաքինութիւն կայ, որ կըսուին ութ երանութիւնք։

Ո՞րն է առաջին երանութիւնն։

Առաջինն է, հոգւով աղքատ ըլլալ. այսինքն՝ մարդս իւր ունեցած մարմնաւոր ստացուածքը բանի տեղ չի սեպել. և անով չի հպարտանալ. և չունենալուն համար չի տրտմիլ։

Ինչէ երկրորդ երանութիւնը։

Երկրորդն է, հեզ լինել. զի՝ երբեք մէկը իւր բերան թշնամութիւն ընէ, անոր դէմ չի բարկանալ, քէն չի պահել. և թշնամութիւն չընել. այլ փոխարէնը բարի ընել։

Ինչէ երրորդ երանութիւնը։

Երրորդն է, սգաւոր լինել. զի՝ իւր մեղքը լալ և սգալ. և այսպէս լալով իւր կորուսեալ հոգին գտնալ։

Ինչէ չորրորդ երանութիւնն.

Չորրորդն է, քաղցեալ և ծարաւի լինել արդարութեան. զի՝ ինչպէս անօթի մարդը հացին, և ծարաւ մարդը ջըրոյն կը փափագի. այնպէս փափագիլ արդարութեան։

Ինչէ հինգերորդ երանութիւնը։

Հինգերորդն է՝ ողորմած լինել. զի՝ թէ հոգևոր և թէ մարմնաւոր ողորմութեամբ՝ կարօտեալ և խղճալի մարդոյն ողորմիլ։

Ինչէ վեցերորդ երանութիւնը։

Վեցերորդն է, սիրտ մը ունենալ.

ք՝ սիրտը մաքուր հայելիին պէս պա-հել, որ զած տեսնալու արժանի ըլ-լայ։

### Ինչէ եօթներորդ երանութիւնը։

Եօթներորդն է, խաղաղարար ըլլալ. ք՝ մեկ ըլ մեկու մէջ եղեալ թշնա-մութիւնը եւ ատելութիւնը վերցունելու ջանք ընել, եւ խաղաղութիւն հաստատել. եւ այսպիսի մարդն՝ որդի այ կը կոչ-վի. զերէ նման կըլլայ որդւոյն այ, որ մեր եւ այ մէջ եղեալ թշնամութիւնը՝ իւր խաչելութեն վերցուց, եւ խաղա-ղութիւն ըրաւ։ Ուստի ով որ խաղա-ղութիւն կը սերմանէ՝ որդի ածոյ է. եւ քանի խաչը եւ մահը անպտուղ կընէ։

### Ինչէ ութերորդ երանութիւնը։

Ութերորդն է, արդարութեան համար հալածում կրել. ք՝ ամեն կերպ նե-ղութեան համբերել, թէ հաւատոյ, թէ ճշմարտութեան համար. ահա քս տէրը՝ ճշմարտութեան համար աշխարք եկաւ-արիւն թափեց. ինչպէս իւր մէջ բե-

րա

բանովը կը վկայէ, թէ ցոյն խօսք էնէտաչ էն, չէ հնայէլիք ճշմարտութէ։

## Գլ. Ը։

### Մեղքն քանի՞ կերպ է։

Երկու կերպ է. սկզբնական և ներգործական։

### Ո՞րն է սկզբնականն։

Սկզբնականն մեղքն է, որ ադամ նախահայրէն սերեալ ունիմք ամենքս։ Նոյս կը ջնջուի մկրտութէ։

### Ո՞րն է ներգործականն։

Ներգործական մեղքն է, որ յետոյ մեր կամօքը չար կը գործեմք։ Նոյս կը ջնջուի զղջմամբ, խոստովանութէ, և ապաշխարութէ։

### Ներգործական մեղքը քանի՞ կերպ է։

Երկու. ներելի և մահացու։

### Ներելի մեղքն ի՞նչ է։

Ներելին է այն՝ որ ըստ ինքեան թեթև մեղք է. կամ որ անգիտութէ կամ չգիտութէ չար կը գործեմք և ոյ ան

ըլ

որ սրտերնուս մէջը ունիմք։

Մահացու մեղքն ինչ է։

Մահացուն այն է՝ որ ըստ ինքեան մեծ մեղք է, կամ որ յօժար կամօք և գիտութեամբ չար կը գործեմք, և Այ սէրը սրտէ կը հանեմք։

Գլխաւոր մահացու մեղքերը քանի՞ են։

Եօթն են. որ՝ հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, և բղջախոհութիւն։

Ո՞րն է մեղք զանցառութեան, և ո՞րն է մեղք առնելութեան։

Զայս գիտցիր, որ Այ պատուիրանաց ոմն յանձնառական է, որ կը պատուիրէ թէ ըրէ, ինչպէս՝ պատուեա՛ զհայր քո և զմայր։ և ոմն հրաժարական է, որ կարգիլէ թէ մի ըներ. ինչպէս՝ մի՛ սպաններ, մի՛ գողնար։ ահա եթէ յանձնառականը զանց առնեմք չի կատարեմք, կըլլի մեղք զանցառութեան։ և եթէ հրաժարականէն հեռու չի կենամք

Նմանք և այլ հրամանէն դէմ գործեալք,
կրակի մեղք տանելուն։

Ընկեր հաղորդաւոր բան չար մեղաւորներու պա-
հելոյ մեղքէն հեռու մնալ։

Այս չորս բանս է. մահն. դատաս-
տանն. դժոխքն. և արքայութիւն։

Վերջ։

24568 (8 [illegible])

7.90 .70 .70 .76